



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«15» օգոստոսի 2019թ.

№ 2/6625 -Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 2/1596-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի N 2138-Ն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանումներում աշխատանքային ռեժիմ սահմանելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 801-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2/1596-Ա հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1) հրամանի 4.1 կետում «18:00» թվերը փոխարինել «21:00» թվերով.



2) հրամանը լրացնել նոր՝ 4.2 կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Սահմանել, որ սույն հրամանի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 4.1-րդ կետերում նշված կառուցվածքային ստորաբաժանումներում, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածին համապատասխան, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանով սահմանվում է հերթափոխային ռեժիմ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 18-ից:

 Recoverable Signature



X 

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ

